
**ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԻՆԵՐԻՆ (1915-1918 թթ.)**

ԽԱՌԱՏՅԱՆ Ա. Ա.

Առաջին աշխարհամարտի մեջ Թուրքիայի մտնելը և հայերի ցեղասպանության սանձազերծումը, որ 1909-ից՝ Ադանայի դեպքերից ի վեր որոճում էին երիտթուրքերը, կործանիչ հարված հասցրեցին Կ. Պոլսում, Ջոնուհայում և Արևմտահայաստանի մի քանի կենտրոններում հրատարակվող հայ մամուլին։ Ինչպիսին ժողովրդին վիճակված ճակատագիրն էր, նույնը նրա մամուլինն էր լինելու։ Ցեղասպանության նախաքայլերը երիտթուրքերը սկսեցին նաև պոլսահայության մեջ։ Մայրաքաղաքի հայությանը ջլատելու նպատակով նախ զանգվածորեն բանակ գորակոչեցին տղամարդկանց, որոնց ճակատագիրն արդեն նախորոշված էր։ Պատերազմ հայտարարվելուց ի վեր Կ. Պոլսից հեռացել էին Համաձայնության երկրների դեսպանները, որ գործելու ազատություն ապահովեց երիտթուրքերին, իսկ Դարդանեղի գործողության ձախողումը այլևս անկասելի դարձրեց հայությանը բնաջնջելու նրանց խելացնոր ծրագիրը։ 1915 թ. գարնանը Կ. Պոլսի հայերի խառն ժողովը այցելեց մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշային և իր խորին մտահոգությունն ու տազնապը հայտնեց կիրառվող բնաջնջման քաղաքականության առթիվ¹։ Փաստորեն, արևմտահայությունը հռչակվել էր օրենքից դուրս։ Պրոֆ. Հ. Հակոբյանը 1915 թ. հոկտեմբերի 15-ին գրում էր Կ. Պոլսից. «Պոլիս մարդ չկայ, փողոցները հայ չեք տեսներ։ Մորթին և չգոյություն ահաւոր են։ Գաւառացիներու մեծ մասը Պոլսէն վտարուեցաւ»²։ Խոսքը վերաբերում էր Կ. Պոլսում բնակվող պանդուխտ հայերին, որոնց տարագրությունը սկսվել էր ավելի շուտ՝ 1915 թ. օգոստոսին։ Ամենայն հավանականությամբ, դրանից հետո հերթը պետք է հասներ բուն պոլսահայերին, ինչպես նկատում է ամերիկյան միսիոներ Ջեքսը³։ Այս առթիվ Յո. Լեփսիուսը գրում էր, որ Կ. Պոլսում դեսպանների լուրջ դիմումներից հետո երիտթուրքերը «հրաժարուեցին ընդհանուր տարագրութեան միջոցները տարածել նաև Պոլիսի եւ Իզմիրի հայ ազգաբնակչութիւնների վրայ։ Սակայն լռելեայն շարունակեցին Պոլիսի հայերի տարագրութիւնը։ Ընդամենը տարագրուեց 10 հազար հոգի, և ոչ մի տեղեկութիւն չկայ նրանց նոր բնակավայրերի մասին»⁴։ Իր հերթին, 1915 թ.

¹ **Զաւէն արքեպ.**, Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ և վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 98-100։

² **Մալեգեան Վ.**, Ճամբուս ծայրը, հ. Բ, Փարիզ, 1955, էջ 92։

³ **Геноцид армян в Османской империи. Сб. документов и материалов**, под ред. **Нерсисяна М. Г.**, II доп. изд., Е., 1983, с. 398.

⁴ **Լեփսիուս Յո.**, Գաղտնի տեղեկագիր, հայ ժողովրդի ջարդերը, Ե., 2003, էջ 134։

դեկտեմբերի 7-ին Թուրքիայում Գերմանիայի դեսպան Մետերնիխը հաղորդում էր, որ դրանից քիչ առաջ Կ. Պոլսից արքայիցին էին 4 հազար հայեր, և որ արքայիցինների թիվը հասնում է 30 հազարի: Նա հարում է, որ «աստիճանաբար պետք է իրականացվի օսմանյան մայրաքաղաքում մնացած 80 հազարի լրիվ հայաթափումը»⁵:

Պոլսահայերի մոտավորապես նպատակադրումն էր պատճառը, որ Համաձայնության պետությունների կողմից հայերին բնաջնջելու վերաբերյալ հայտնի հայտարարությունը հերքելու իր փորձերում թուրքական Հավաստագրությունը մեծապես նվազեցնում էր պոլսահայերի թիվը՝ ավելի քան 200 հազարից այն իջեցնելով 77.836 մարդու⁶: 1916 թ. ապրիլին միայն երիտթուրքերը որոշեցին ձեռնարկել ինքն իր. Պոլսի հայությանը արքայիցին և ոչընչացնելու մտադրությունից: Մնում էին, սակայն, հայերի ազգային կառույցները, նրանց Ազգային սահմանադրությունն ու կրոնական ավանդական կենտրոնները, որոնց փլուզման վրա ուղղվեց երիտթուրքական տակավին չհազեցած խորշակը: 1916 թ. հերթը հասավ պատրիարքարանին: Կ. Պոլսի պատրիարքին ուղղված՝ հուլիսի 28-ի գրությամբ կառավարությունը հայտնում էր, որ «Թաքվի-ի վեբայի» պաշտոնաթերթի նույն օրվա համարում տպագրված «Հայոց կաթողիկոսության և պատրիարքության «կանոնադրության» համաձայն, միացվում են Սսի և Աղթամարի կաթողիկոսությունները և դրանց են կցվում Կ. Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունները: Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը և Ազգային սահմանադրությունը վերացվում էին, նոր կրոնական գլուխը՝ կաթողիկոս-պատրիարքը, ինչպես և հույների պատրիարքության համար էր սահմանված, գործելու էր երկու՝ կրոնական և խառն ժողովների գործակցությամբ, միայն կրոնական, դպրոցական և բարեգործական ոլորտում: Կաթողիկոս-պատրիարքի նստավայրն էր սահմանվում Երուսաղեմի Ս. Հակոբի վանքը: Այս կրոնական մարմինը ամբողջովին անկախ էր լինելու Էջմիածնի կաթողիկոսությունից⁷: Կաթողիկոսական-պատրիարքական փոխանորդ էր

⁵ Дадрян В. Н. История армянского геноцида. Этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Е., 2007, с. 291. Ռ. Գևորգյանը Կ. Պոլսից և Չանքլայեից (Գելիբոլու, Դարդանեղի շրջան) արքայիցին հայերի թիվը հաշվում է 40 հազար մարդ (Gevorkian R. Soykirimin İkinci Safhasi, Istanbul, 2011, s. 32).

⁶ Ձախարքյան, նշվ. աշխ., էջ 148:

⁷ Տե՛ս Կանոնագիր Հայոց կաթողիկոսութեան և պատրիարքութեան, Երուսաղեմ, 1917, էջ 3, 14: Կանոնագիրը փաստորեն ամրագրում էր Օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանության իրողությունը՝ սահմանելով, որ «Առաջնորդական շրջանակներին որոշ պիտի կազմակերպուին առնուազն 15.000 հայ պարունակելու պայմանով»: Ցեղասպանության ծրագիրն ինքնին բացառում էր այդչափ հայերի համախումբ բնակությունն Արևմտյան Հայաստանում կամ անգամ վերապրած բեկորների առկայության դեպքում՝ ցեղասպան պետության կողմից նոր առաջնորդություն ստեղծելու հնարավորությունը (տե՛ս Գերմանիան և Հայաստանը

կարգվել Ս. Ճեվահիրճ-յանը, Երուսաղեմի կաթողիկոս-պատրիարք՝ Ս. արք. Խաչայանը⁸: Ջավեն պատրիարքը արքայվեց Բաղդադ, ապա Մոսուլ:

1915-1918 թթ. արևմտահայ մամուլի գործողության սահմանների, բովանդակության և իշխանությունների հետ ունեցած փոխ-հարաբերությունների մասին կան ընդամենը կցկտուր տեղեկություններ, որոնց արժեքը առավել կարևորվում է այն իմաստով, որ հայրենական հավաքածուներում, ասենք, արտերկրում նույնպես, չեն պահպանվել կամ գրեթե չեն պահպանվել այդ տարիների պոլսահայ կամ զմյուռնահայ թերթերը: Էլ չենք խոսում Արևմտահայաստանի մասին, որտեղ ոչ ընթերցող էր մնացել և ոչ էլ թերթ: Համենայն դեպս, առկա տվյալները, որոնց համար այսօր պարտական ենք գերազանցապես Թեոդիկի «Ամենուն տարեցոյցին» և Թ. Ազատյանի՝ «Ժամանակ» թերթին նվիրված հայտնի աշխատությանը, թույլ են տալիս որոշ պատկերացում կազմել և անգամ եզրակացությունների հանգել ասվածի վերաբերյալ:

Թեոդիկի «Ամենուն տարեցոյցը», անփոխարինելի տեղեկություններ է հաղորդում դարի առաջին տասնամյակների հայ մամուլի, խմբագիրների, գրաքննական ճնշումների և Կ. Պոլսի գրական-լրագրական իրողությունների մասին: Նա անդրադարձել է Առաջին աշխարհամարտի տարիներին այստեղ գոյատևած չորս թերթերի՝ «Բյուզանդիոնի», «Ժամանակի», «Վերջին լուրի» և հայատառ «Ճերիտեի շարգիյեի» («Արևելյան լրաբեր») կիսակենդան վիճակին՝ գրաքննական մտրակի տակ ջլատված և սոսկ անվանապես գոյա-տևող, որպիսին դրանց համար նախատեսել էին երիտթուրքական իշխանությունները: Սրանք այդ թերթերի գոյությունը հանդուր-ժուր էին զուտ քարոզական նպատակով՝ ի ցույց դնելու Կ. Պոլսում հայերի կարծեցյալ ապահովվածությունն ու մշակութային լիարժեք կյանքը: Այդ մամուլը «գաքարիական պերճախօսութեան» պարտադրված՝ ամենևին չէր արձագանքում Թուրքիայի և նրա դաշնակիցների ռազմական պարտություններին, գավառներից հայերի տեղահանության, զանգվածային սպանությունների և այլնի իրողություններին:

Թեոդիկը մատենագիտական բարեխղճությամբ թվարկում է 1910-ական թթ.՝ զինադադարից առաջ և հետո Կ. Պոլսում լույս տեսած հայկական թերթերը, այդ թվում և կուսակցական հրատարակությունները, հավելում հետաքրքիր մանրամասներ դրանց խմբագիրների մասին: Թեոդիկը սկզբնաղբյուրի արժեք ունեցող տեղեկություններ է տալիս նաև ցեղասպանության տարիներին Կ. Պոլսում լույս տեսած որոշ թերթերի և շատ ավելի ամբողջական՝ 1918-1920-ականի սկզբներին հրատարակված պարբերականների վերաբերյալ:

1914-1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հ. 1, հրատարակութ. և ներածութ. դոկտ. Յո. Լեփսիուսի, Ե., 2006):

⁸ Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1916-1920, էջ 179:

Ժամանակի հայ մամուլի պատմության տեսակետից արժեքավոր են Թեոդիկի տեղեկությունները պատերազմի տարիներին Կ. Պոլսից արքայազն (նաև չարքայազն) և արքայից վերադարձած սակավաթիվ խմբագիրների մասին: Նշվում է, որ արքայից վերադարձել են Ե. Օտյանը, Ա. Անտոնյանը, Մ. Շամտանձյանը, Բ. Քեչյանը, Ե. Թոլայանը և Ա. Մյուրահյաձյանը⁹:

1910-ական թթ. մամուլի մասին արժանահավատ տեղեկություններ են հաղորդում իրենք՝ ժամանակի լրագրության ղեմքերը իրենց հուշագրություններում: Ճանաչողական արժեք ունեն Ե. Օտյանի, Ե. Թոլայանի, Հ. Արամյանի, Հ. Միրունու և այլոց հուշագրություններն ու նրանց վերաբերյալ անդրադարձները՝ թեև կցկտուր և հատվածական, բայց և փաստականորեն ճշմարիտ մանրամասներով¹⁰: Ե. Օտյանի ինքնատիպ շարադրանքը կասկած չի թողնում, որ ցեղասպանության հրեշավոր ծրագրի մեկնարկը երիտթուրքերը սկսել էին նաև մտավորականության, այդ թվում և մամուլի գործիչների զանգվածային ձերբակալություններով: Ե. Օտյանն իր պատումը սկսում է 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում ձերբակալված խմբագիր-լրագրողների ու այլ մտավորականների հետգհետե ավելացող անուններով՝ Բարսեղ Շահպազ, Ն. Տաղավարյան, Վ. Թորգոմյան, Ե. Թոլայան, Ա. Անտոնյան և շատ ուրիշներ: «Յետոյ հասկցանք, թե դժոխային ծրագրի մը, հայ ցեղի բնաջնջումին առաջին ահռելի դրուագն էր, որ տեղի կունենար»¹¹, - գրում է Ե. Օտյանը: Ինքը՝ Ե. Օտյանը, թաքնվել էր մի որոշ ժամանակ, բայց հետո ձերբակալվել և արքայազն զուտ պատահականությունների շնորհիվ անցնելով ցեղասպանությունը վերապրած սակավաթիվ մտավորականների շարքը:

Այս տարիների արևմտահայ մամուլը չէր կարող ազգային զգացումներ արծարծող միտումներ կամ առհասարակ ընթերցողին հետաքրքրող լուրջ բովանդակություն ունենալ: Թերթերի ծավալն արդեն վկայում է դրանց չգոյության մասին: Այդ ակնհայտորեն երևում է մի քանի թերթերի հետ գոյատևած «Ժամանակի» ծավալա-յին փոփոխություններում: 1914 թ. սեպտեմբերի 2-ից սկսած՝ այս թերթը լույս է տեսել երկու էջով, որոնք լցվում էին Ե. Օտյանի երգիծական «Տոմսակներով» և, անշուշտ, գրաքննության պարտա-դրած քաղաքական լուրերով: 1915 թ. հունվարին «Ժամանակը» վերականգնում է չորս էջի նախկին ծավալը, չքանում են Ե. Օտյանի «Տոմսակները», ինչպես և «Թաղականին կնիկը» երգիծավեպը: 1916 թ. փետրվարի 21-ից «Ժամանակը» վերստին ամփոփվում է երկու էջի

⁹ Նույն տեղում, 1916-1920, էջ 115-117:

¹⁰ Օտեան Ե., Իրիկուան տոմսակ, 1915, ապրիլ 11-12, Վերջին լուր, 1921, 25 ապրիլի: Նույնի՝ Անիծեալ տարիներ. 1914-1919 (անձնական յիշատակներ), Թեհրան, 2005: Թոլայան Ե., («Գաւռօշ»), 35 տարուայ թատերախմբագրական յիշողութիւններ, հ. Ա, Ե., 2008: Արամեան Հ., Մեծ եղեռնի պատգամ. Հայոց տանթէական, Պէրոյթ, 1970: Միրունի Յ, Ճ. Ինքնակենսագրական նոթեր, Ե., 2006: Մեծարանք առ Երուանդ Տեր-Անդրէասյան (խմբ. Նարդունի Շ.), Փարիզ (անթվակիր):

¹¹ Օտեան Ե., Իրիկուան տոմսակ, Վերջին լուր:

սահմաններում¹², հավանաբար, քառեջ ծավալին վերադառնալով զինադադարից հետո, 1918 թ. աշնանը: Պատերազմի տարիներին մամուլին փոխարինելու էր եկել երիտթուրքերի բացահայտ, ընթերցողի վզին փաթաթվող քարոզչությունը՝ թերթերի հավելվածների ձևով: Այդ չորս տարիների ընթացքում, գրում է Թեոդիկը, «փողոցը ցրուիչ տղոց ձեռքն էին թաց-թաց թերթեր եւ իլավէներ (հավելվածներ - իւ. Ա.)՝ առանց առաջնորդող յողուածի, առանց գրականութեան եւ առանց խորհողութեան, անգոյն եւ ան-դրօշմ թուղթի կտորուանք, որոնք օրագիր ըլլալէ զատ ամէն բան էին»¹³: Թերթերն հատկապէս լռություն էին պահպանում ամեն մի այնպիսի լուրերի մասին, ինչպիսիք էին Օսմանյան Թուրքիայի անհաջողությունները ռազմաճակատներում, Արևմտահայաստանում ջարդերն ու հայաթափումը, հայ պանդուխտների ու մտավորականների տեղահանություններն ու աքսորը Կ. Պոլսից և այլն: Չէր կարելի գրել անգամ այն իրողությունների վերաբերյալ, որոնք, թեկուզ և միջնորդավորված, կարող էին ինչ-որ չափով նպաստավոր լինել Անտանտի երկրների համար: Թերթերի այդպիսի փորձերը տեղնուտեղը և իստիվ կասեցվում էին գերմանա-թուրքական գրաքննիչների կողմից: 1914-1918 թթ. գոյատևած «Վերջին լուր» թերթի աշխատակից Հ. Արամյանը գրում է, որ պատերազմի առաջին օրերից «խիստ գրաքննութիւն հաստատուեցաւ», - և որ ողջ հայ մամուլն այդ օրերին «շատ վերապահ, զգոյշ և խոհեմ էր»: Նրա թարգմանությամբ 1914 թ. աշնանը «Վերջին լուրը» գերմանական սոցիալ-դեմոկրատական «Ֆորվերթս» թերթից տպագրել էր հակապատերազմական մի հոդված, և հետևանքն իրեն սպասեցնել չէր տվել: Երիտթուրքական մամուլի դիվանը չբավարարվեց թերթը փակելու սպառնալիքով: Պաշտոնագրկվեցին թերթի հայ գրաքննիչները, իսկ ոստիկանությունն ընկավ իր Հ. Արամյանի հետևից. «Տիգրան Զաւէն (ճանաչված հրապարակախոս-լրագրող, խմբագրել է Կ. Պոլսի «Երկրի ձայնը», «Երկիր», «Ժողովուրդ» և այլ թերթեր- իւ. Ա.) զիս փրկեց, քիչ մնաց ոտքի տակ պիտի երթայի: Քանզի երկու ոստիկան զիս կը փնտռէին»¹⁴, - գրում է Հ. Արամյանը:

¹² Ազատեան Թ., «Ժամանակ» քառասնամեայ յիշատակարան, 1908-1948, Կ. Պոլիս, 1948:

¹³ Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, Կ. Պոլիս, 1916-1920, էջ 271:

¹⁴ Արամեան Հ., Մեծ եղեռնի պատգամ. Հայոց տանթէական, Պէյրուս, 1970, էջ 60-62: Գրաքննությունն իրականացնում էր նորաստեղծ Ռազմական դրության գրասենյակը («Դիվանի հարբի օրֆիյե»), որն իսկույն աչքի ընկավ մամուլի հանդեպ իր ահաբեկչական գործելակերպով: Դրա աչալուրջ հսկողության տակ բոլոր թերթերը զրկվեցին իրենց լրատվական ինքնուրույնությունից: Օրինակ, մամուլը պարտավոր էր գրել Գերմանիայի միայն հաղթանակների մասին, իսկ պարտության մասին լրատվությունը խստորեն հատուցվում էր առժամանակյա կամ մշտական դադարով: Այս կերպ պատժվեցին ՀՅԴ պաշտոնաթերթ «Ազատամարտը» և «Վերջին լուրը», որն, ի դեպ, Գերմանիայի պարտության մասին մի լուր էր տպագրել, սակայն, հավելելով, որ միևնույն է, Գերմանիան ի վերջո հաղթելու է (տե՛ս İetinoğlu S. Exterminators Yok Ediciler ve Erdemli Mışılmanlar, Istanbul, 2011, s. 166-167): Պետք է կարծել, որ այս

Երիտթուրքական ռազմական գրաքննությունը, իրոք, պատժիչ կառույց էր դարձել լրագրողների համար: Ավ. Փափագյանը այս առթիվ վկայակոչում է թուրք գործիչ Օսման Նուրիին, ըստ որի, «Այդ պահից սովորական երևույթ դարձավ արքայի»¹⁵: Նույն գրաքննությունն ամեն կերպ խրախուսում էր թուրքական մամուլի մերկապարանոց և կեղծ տեղեկատվությունը պատերազմում Թուրքիայի և նրա դաշնակիցների տարած անընդհատ հաղթանակների մասին:

Փոխարենը, թուրքական լրատվամիջոցները լեփ-լեցուն էին էժանագին և գոեհիկ հարձակումներով ընդդեմ Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականությանը հակասող որևէ երևույթի, սպառնալիքներով ու վրեժխնդրության կոչերով՝ ուղղված «ներքին թշնամիների»՝ հայերի և հույների դեմ: Երիտթուրքական «Թասվիր-ի էֆթյար» («Մտքերի արտացոլում») թերթը հայիոյական բառախաղերով դեռևս 1914 թ. տեղեկացնում էր. «Մեր կառավարությունը ճամբու կը դնէ հայ վալիները», այսինքն՝ Հոֆին և Վեստենենկին՝ առաջինին անվանելով «Էոֆ», իսկ երկրորդին՝ «Փեզենկ (զգվանքի և հայիոյական հորջորջումներ)»¹⁶:

Երիտթուրքերը գրեթե ոչնչացրեցին հայ մամուլը: Կ. Պոլսում 1914 թ. սկզբներին լույս տեսնող ավելի քան 30 թերթերից ու ամսագրերից նույն տարվա ընթացքում հրատարակվելուց դադարեցին 25-ը, որը ոչ այլ ինչ էր, քան լրատվամիջոցների ջարդ¹⁷: 1910-ական թթ., մինչև պատերազմը Կ. Պոլսում տպագրվում էին յոթ առավոտյան թերթեր՝ «Ժամանակը», «Ազատամարտը», «Նոր աշխարհը», «Հայրենիքը», «Մանգումեի էֆթյարը», «Սուվնուրը», «Արևելքը», և երկու երեկոյան թերթեր՝ «Բյուզանդիոնը» ու «Բանբերը» (հետագայում՝ «Վերջին լուր»), ինչպես և մի կարճ ժամանակ հրատարակված «Լուսարձակ» օրաթերթը¹⁸: Պատերազմից առաջ և սկսվելուց հետո այս թերթերը գերազանցապես փակվեցին վարչական ու գրա-քննական վայրագությունների պատճառով: 1915-1918 թթ. պոլսահայ թերթերից իրենց հրատարակությունը շարունակեցին, և այն էլ՝ կատարելապես գրկված մամուլի լրատվական ու բովանդակային հատկանիշներից, ընդամենը 4-ը՝ «Բյուզանդիոնը», «Ժամանակը», «Վերջին լուրը» և հայաստառ թուրքերեն «Ճերիտեի շարգիյե»-ն¹⁹:

շրջանում՝ 1914 թ. փակվեց Կ. Պոլսում հրատարակված հայկական թերթերի մեծագույն մասը:

¹⁵ Փափագյան Ավ., Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Ե., 1988, էջ 13-14:

¹⁶ Թեռքիկ, նշվ. աշխ., էջ 69:

¹⁷ Տե՛ս Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության (1794-1934), կազմ. Լևոնյան Գ., Ե., 1934, էջ 34-81:

¹⁸ Ազատեան Թ., նշվ. աշխ., էջ 156-157:

¹⁹ Թեռքիկ, նշվ. աշխ., էջ 271: «Բյուզանդիոնը» 1915-1918 թ. դեկտեմբեր խմբագրել են Բ. Քեյանի որդիները՝ Աշոտը և Պարույրը: «Ժամանակի» տնօրենն էր Ս. Գոչունյանը և, անտարակույս, այդ թերթը իր հարատևման համար մի հայտնի չափով

Արդյոք պատահական էր այս չորս թերթերի հրատարակության թողությունը երիտթուրքական իշխանությունների կողմից: Կարելի է պնդել, որ ոչ այստեղ մի հայտնի չափով մտածված մոտեցում կար: Նախ, առաջին երկուսը՝ «Բյուզանդիոնը» և «Ժամանակը», արևմտահայ ամենահեղինակավոր ու տարածված թերթերից էին, դրանց, ինչպես և «Վերջին լուրի» պահպանումը անհրաժեշտ էր իթթիհատին՝ Կ. Պոլսում հայերի, իբր, անվրդով ապրելու քարոզչության համար: Անշուշտ, հաշվի էր առնվել այդ թերթերի անկուսակցականության հանգամանքը: Այսպիսի մոտեցումը, ինչպես հայտնի է, չխանգարեց, որ իշխանությունները հետապնդեն այդ թերթերի՝ իրենց ատելի դարձած աշխատակիցներին, ինչպես, ասենք, Բ. Քեյանին («Բյուզանդիոնի» խմբագիրը) և Ե. Օտյանին («Ժամանակ»): Բնչ վերաբերում է «Ճերիտեի շարգիյե»-ին, այս թերթը Կ. Պոլսում հրատարակվող միակ հայատառ թուրքերեն թերթն էր, որ դարձյալ կարող էր փաստարկ ծառայել երիտթուրքական երեսպաշտական պնդումների համար:

Պատկերը նույնն էր, բնականաբար, շատ ավելի փոքրաթիվ թերթերի առկայությամբ, Զմյուռնիայում: 1914 թ. այստեղ հրատարակվող երեք պարբերականները՝ «Աշխատանքը», «Քնար» կիսամյան, ինչպես և «Հայ գրականություն» ամսագիրը փակվեցին: 1914 թ. փակվել էր նաև «Դաշինք» օրաթերթը, որի մասին վկայում է լավատեղյակ Ս. Պարթևյանը. «Գրեթե հնգամեայ դադարէ մը յետոյ, զինադադարին հետ կը վերսկսեր (այդ թերթի խմբագիր Հ. Մամուրյանը - Խ. Ա.) իր թերթը՝ «Դաշինքը», զոր «Արեւելեան մամուլ» անուանափոխութեան ենթարկեց վերջացող տարուան յունիս»²⁰: 1915-1918 թթ. Զմյուռնիայում հայերեն թերթ չի հրատարակվել: Ավելացնենք, որ «Դաշինքը» ուներ ռամկավարական կամ վերակազմյալ հնչակյանական ակնհայտ ուղղություն, որ չէին կարող հանդուրժել առհասարակ հայ կուսակցությունների մամուլի նկատմամբ ծայրահեղ ատելությամբ լցված երիտթուրքական իշխանությունները: Բացի այս ամենից, 1915 թ. երիտթուրքական իշխանությունները պատրաստվում էին արտոնել Զմյուռնիայի ամբողջ հայ բնակչությանը, անգամ մասնակի տեղահանության էին ենթարկել այդ քաղաքի և դրան կից հայաբնակ շրջանների հայերին: Ցեղասպանների հետագա գործողությունները կասեցվեցին գերմանական հրամանատարության կողմից²¹:

Հայ մամուլի դեմ երիտթուրքական ոչնչացնող քաղաքականությունը շատ ավելի կտրուկ և միանշանակ եղավ բուն Արևմտահայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ վիլայեթներում: Ցեղասպանությանը ընդհուպ նախորդող՝ 1914 թ., այդ տարածքներում (Վան, Խարբերդ, Սեբաստիա,

պարտական էր նրա անդուլ ջանքերին՝ Ս. Գոչունյանի մահվանից հետո (1913): «Վերջին լուրը» հրատարակվում էր 1914-ից՝ Վ. Թոշկյանի խմբագրությամբ:

²⁰ Պարթևեան Ս., Զմյուռնահայ տարեցոյցը, Ա տարի, Բզմիր, 1920, էջ 90:

²¹ Գերմանիան և Հայաստանը. 1914-1918, հ. 1, էջ 70:

Թոքատ, Էրզրում, Խոտորջուր, Երզնկա, Նիկոմեդիա, Տրապիզոն, Պարտիզակ և այլուր) հրատարակվող բոլոր 18 թերթերն ու հանդեսները փակվեցին:

Վերը նշվածը թույլ է տալիս ասելու, որ երիտթուրքերը հայ մտավորականությանը 1915 թ. ապրիլին և հետո զանգվածորեն ձերբակալելուց և կալանավորելուց մեկ տարի առաջ՝ 1914 թ. սկսել և ավարտել են նրան լռեցնելու և հասարակությունից մեկուսացնելու գործընթացը: Հայ հանրությունը և՛ Կ. Պոլսում, և՛ Զմյուռնիայում ու Արևմտահայաստանում, ինչպես և Թուրքիայի հայաբնակ մյուս վիլայեթներում 1915 թվականը դիմավորում էր գրեթե գրկված մամուլից և ուրեմն մտավորականության հետ հաղորդակցվելու հնարավորությունից:

Գրաքննությունն ու զինվորական իշխանությունները ամենից առաջ հարձակումներն ուղղեցին կուսակցական, ինչպես և երգիծական հրատարակությունների դեմ՝ անկասելի էլք տալով, ի դեպ, երգիծանքի ժանրի նկատմամբ առհասարակ թուրքական իշխանավորների ավանդականորեն հայտնի ատելությանը:

Երիտթուրքական կառավարողները փորձեցին ստեղծել նաև իրենց ձեռնաստուն մամուլը՝ ի դեմս Ա. Մկրտչյանի և Հ. Հովասափյանի, որոնք Զ. Կյոզյուրյանից խլեցին «Տաճար» կրոնաթերթը՝ այն վերածելով «անկրօն օտկանի մը»: Սրանց կամ սրանց նման ազգութացների ձեռքով զինադադարից ոչ շատ առաջ հրատարակվեցին «Հայրենիք» թերթը և էլ ավելի կարճ ժամանակ՝ իշխանություններին հաճկատար «Մօտա» հանդեսը, որը «մեռաւ իրեն ծնունդ տուող խմբագրին հետ»²², - գրում է Թեոդիկը:

Կուսակցական թերթերից Կ. Պոլսում 1915 թ. ապրիլին դադարեցվեց դաշնակցության պաշտոնաթերթ «Ճակատամարտը» («Ազատամարտի» շարունակությունը, որ վերահրատարակվեց 1918 թ. նոյեմբերին՝ «Արդարամարտ» անվամբ): Դադարեցվեցին վերակազմյալ հնչակյան «Առավոտ» թերթը և երգիծական բոլոր հրատարակությունները, այդ թվում և Ե. Թոլայանի «Կավոռշը»: Հրատարակվող մի քանի թերթերը ենթարկվեցին խստագույն գրաքննության, որ իշխանություններն արդեն անում էին պատերազմից անմիջապես առաջ, և որը հասկանալի է դառնում հայ մամուլի նկատմամբ նրանց վերաբերմունքի համատեքստում: «Կառավարութեան տեսակէտին անհաշտ արտայայտութիւն մը, շփոթ լուր մը կամ իրողութեան մը սխալ արձագանգը յաճախ տեղի կուտային այս կամ այն թերթին առժամանակեայ դադարման», - գրում է Թ. Ազատյանը²³: Պատերազմից առաջ «Ժամանակ» թերթն այս կերպ խափանվել է չորս անգամ՝ զինվորական գրաքննության կողմից²⁴: Ի դեպ, 1913 թ. հունիսի 11-ին «Ժամանակը» փակվել էր այն պատճառով, որ տպագրել էր վարչապետ Մահմուդ Շելքեթին սպանողների լուսանկարները՝ կախաղան հանված: Ըստ գրաքննական

²² Նույն տեղում, էջ 272:

²³ Ազատեան Թ., նշվ. աշխ., էջ 141:

²⁴ Նույն տեղում, էջ 141, 153-154, 157:

կանոնների, թերթը հարկադրված էր փոխել անունը, որ և արեց խմբագիր Մ. Գոչունյանը թերթը վերանվանելով «Հեռաձայն» (դրանից առաջ նա ձեռք է բերել այդ անվամբ թերթի արտոնատիրությունը): Մի որոշ ժամանակ անց խմբագիրը վճարում է նույն գրաքննական կանոններով սահմանված՝ 500 ռսկի երաշխավորական գումարը, և թերթը դարձյալ լույս է տեսնում նախկին՝ «Ժամանակ» անունով: Միջադեպը ուշագրավ է նաև նրանով, որ «Ժամանակի» վերոհիշյալ զանցանքը կրկնած «Մանգումեի էֆքյարը» («Կարծիքների շարք», հայատառ թուրքերեն ամենաերկարակյաց և ամենահեղինակավոր թերթը, որ լույս էր տեսնում Կ. Պոլսում, 1866 թ. ի վեր) նույալես դադարեցվել էր իշխանությունների կողմից, սակայն նրա հրատարակիչները չէին կարողացել հայթայթել վերահրատարակության համար անհրաժեշտ գումարը, և այդ թերթը 1913 թ. դադարեց ընդմիջման²⁵: Ավելացնենք, որ 1915-1918 թթ. Կ. Պոլսում երիտթուրքական գրաքննիչների հետ միասին գրաքննական գործառույթ էին իրականացնում նաև գերմանական զինվորական պաշտոնյաները, որի հետևանքով այս տարիների մամուլն ընկավ երկակի՝ «թուրք և գերման գրաքննութեան մագիլներուն տակ»²⁶:

Հայ մամուլը վերը նկարագրված դրության մեջ մնաց մինչև Մուդրոսի զինադադարը (1918 թ. հոկտեմբերի 30), որին հաջորդող ամիսների ընթացքում այն պետք է հայտնվեր վերածնության հույսեր ներշնչող պայմաններում, որոնք, սակայն, իրենց հակադրությանը պետք է վերածվեին քեմալականների իշխանության գլուխ անցնելուց հետո:

ЗАПАДНОАРМЯНСКАЯ ПЕЧАТЬ В ГОДЫ ГЕНОЦИДА (1915-1918 гг.)

ХАРАТЯН А. А.

Резюме

Вступление Турции в Первую мировую войну и инициированный и осуществленный турками геноцид весьма отрицательно сказались на армянской периодике, издававшейся в Западной Армении и Смирне. В

²⁵ Նույն տեղում, էջ 157: Հակառակ հայ մամուլի բոլոր մատենագիտությունների տվյալների, որոնց համաձայն, «Մանգումեի էֆքյարը» հրատարակվել է կամ մինչև 1917 թ. [տե՛ս Հայոց պարբերական մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրության (1794-1934), էջ 151, 170, Հայ պարբերական մամուլը, մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմ. Բաբլոյան Մ., Ե., 1986, էջ 55], կամ 1919 թ. (Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), կազմ. Գիրակոսյան Ա., Ե., 1970, էջ 132), «Մանգումեի էֆքյարը» իրականում դադարել է հիշյալ միջադեպից հետո, 1913 թ. հունիսին:

²⁶ Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 271:

результате антиармянской политики младотурок, направленной на уничтожение армян, армянские периодические издания целиком перестали издаваться в Западной Армении и частично – в Константинополе. Были арестованы и сосланы сотни редакторов, публицистов и журналистов.

Из издававшегося в Константинополе огромного числа газет и журналов удалось сохранить три армянские и одну армяноязычную турецкую газету, издание которых было на руку лживой иттихадской пропаганде, желающей представить безмятежную жизнь армян. Эти газеты стали жертвой двойной – жестокой немецко-турецкой – цензуры и контролировались канцелярией Военного положения (Диван Харбиорфие). Был сокращен объем газет, редакции этих газет вынуждены были публиковать лишь ложные сведения, которые были выгодны Турции и ее союзникам и в виде приложений навязывались цензурой. Армянская периодика Константинополя оставалась в таком положении до Мудросского перемирия (30-е декабря 1918 г.) и падения иттихадского режима.

WESTERN ARMENIAN MEDIA IN THE YEARS OF THE GENOCIDE (1915-1918)

A. KHARATYAN

Abstract

Turkey's entry into the First World War and committing the Armenian Genocide was a devastating blow to the Armenian press published in Western Armenia, Constantinople, and Smyrna. As a result of the Young Turks' policy of extermination of Armenians, the press published in the Ottoman Empire completely stopped being issued in Western Armenia and partially in Constantinople. Hundreds of editors, publicists and journalists were arrested and deported. Four Armenian newspapers three of which in the Armenian language and one in Turkish using Armenian letters were preserved out of dozens of newspapers and magazines to produce news on the Armenians' seemingly unperturbed life. The mentioned newspapers appeared to be under the German-Turkish double ferocious censorship and were monitored by Martial law office (Divan-I harbi orfie). The volume of newspapers was considerably reduced. They were compelled by the censorship to publish false news [in the form of appendix (*ilave*)], which was beneficial only for Turkey and its allies. Between 1915-1918, the situation with the Armenian periodicals remained the same in Constantinople until the Armistice of Mudros (October 30, 1918) and the crush of the Ittihad regime.